Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1908 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ՝ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների (այսուհետ՝ ավտոմոբիլային ճանապարհներ) վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման աշխատանքների իրականացման և կատարված աշխատանքներն ընդունելու կարգը, ինչպես նաև պահպանման մրցույթներին մասնակից կապալառու կազմակերպություններին ներկայացվող նվազագույն տեխնիկական պահանջները:

2. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման հիմնական նպատակներն են՝

1) տրանսպորտային միջոցների շուրջօրյա՝ ամենօրյա ռեժիմով, անընդհատ երթևեկության ապահովումը՝ ճանապարհների համար հաշվարկված արագությունների, առանցքային բեռնվածքների հաշվարկներին համապատասխան.

2) աշխատանքի և նյութատեխնիկական ռեսուրսների նվազագույն ծախսերով կամուրջների երաշխավորված անվտանգ ու տեխնիկապես բարեկարգ վիճակի և նրանց ծառայության հաշվարկային ժամկետի ապահովում.

3) կամուրջների արտաքին տեսքի պատշաճ վիճակում պահպանում.

4) կամրջի կոնստրուկտիվ տարրերի, կառույցների, սարքավորումների ժամանակից շուտ մաշվածության կանխում:

3. Պետական կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման

աշխատանքների կապալի պայմանագրերը կնքվում են 5 տարի ժամկետով (յուրաքանչյուր տարի կողմերի համաձայնությամբ պայմանագրի արժեքի վերանայման հնարավորությամբ կախված նախորդ տարվա պաշտոնապես հրապարակված միջին գնաճից՝ տվյալ տարվա համար նախատեսված հատկացումների շրջանակներում) այն կազմակերպությունների հետ, որոնք բավարարում են սույն հավելվածի 4-րդ գլխով սահմանված նվազագույն տեխնիկական պահանջներին և ընտրվել են մրցութային կարգով՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

4. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման աշխատանքների նկատմամբ հսկողությունն իրականացնում է սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով նշանակված տվյալ ավտոճանապարհների պահպանման պատասխանատուն (այսուհետ՝ պատասխանատու):

5. Պայմանագիրը կնքելուց հետո պատվիրատուի և կամրջի պահպանման աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպության (այսուհետ՝ կապալառու) միջև կնքվում է առանձին պահպանման հանձնվող կամրջի հանձնման-ընդունման ակտ, որում արձանագրվում է կամրջի առկա վիճակը:

ԳԼՈՒԽ 2.

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ՝ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

6. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման հիմնական սկզբունքն է՝ կամուրջների կոնստրուկտիվ տարրերի (կամրջային մոտեցումներ, կամրջի կցորդման հանգույցի, կամրջի երթևեկելի մասի, թռիչքային կառուցվածքների (պողպատե, պողպատերկաթբետոնե, բետոնե և քարե հենարաններ) վնասվածքների առաջացման կանխարգելումը:

7. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման համար անհրաժեշտ է իրականացնել կամուրջների զննման, դիտարկման, ստուգման, խնամքի և ընթացիկ նորոգման աշխատանքներ: Նշված աշխատանքները պետք է իրականացնել Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, տեխնիկական նորմերին և կանոններին համապատասխան:

8. Կամրջի պահպանման աշխատանքներն իրականացնող կապալառուն պարտավոր է վարել կամրջի պահպանման աշխատանքների էլեկտրոնային մատյան (այսուհետ՝ Մատյան)՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Երթուղային ցանցի մոդելավորման և ճանապարհային ցանցի ակտիվների կառավարման և սպասարկման աշխատանքների

պլանավորման և վերահսկման» համակարգում՝ կապալի պայմանագրի պահանջներին համապատասխան: Մատյանում նշվում են կապալառուի պատասխանատուի կողմից զննման, դիտարկման և ստուգման արդյունքները:

9. Յուրաքանչյուր քաղաքացի իրավասու է կամրջի վրա առկա թերություններն արձանագրել «Ճանապարհների տեղեկատու» (Arm roads info) բջջային հավելվածի միջոցով: Արձանագրած թերությունները գրանցվում են «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգ»-ում և դրա մասին տեղեկացվում է կապալառուին պատասխանատուի կողմից: Կապալառուի կողմից թերությունները վերացվում են սույն կարգի Աղյուսակ 3-ում նշված ժամկետում, ինչի մասին թերությունը վերացնելու օրը կապալառուն տեղեկատվություն է ուղարկում պատասխանատուին համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին՝ կցելով թերությունների վերացման փաստը հավաստող լուսանկարներ (մինչև 10 հատ):

10. Թերությունները՝ սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում, դրանք պատասխանատուի կողմից ներառվում են ամսական ամփոփագրում և հիմք են հանդիսանում պատասխանատուի համար սույն կարգի Աղյուսակ 3-ում բերված տոկոսաչափերով նվազեցումներ կիրառելու համար:

11. Թերության վերացման վերաբերյալ տեղեկատվությունը՝ կից նկարներով ինքնաշխատ եղանակով ուղարկվում է նաև թերությունն արձանագրած քաղաքացու համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին:

12. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման հիմնական տեխնիկական պահանջները, որոնք պարտադիր են կամուրջների պահպանման կապալառու կազմակերպությունների (այսուհետ՝ կապալառու) կողմից կատարման համար, հետևյալն են՝

<u>1) Զննումների և դիտարկումների իրականացում.</u>

ա.զննումները և դիտարկումները պետք է կատարվեն կամուրջների պահպանումը իրականացնող կապալառու կազմակերպության պատասխանատուի կողմից՝ առնվազն երեք օրը մեկ անգամ: Զննումները և դիտարկումերը պետք է ուղղված լինեն՝ կամրջի ընդհանուր վիճակի գնահատմանը, վնասվածքների և առաջացած թերությունների հայտնաբերմանը.

բ. զննումները և դիտարկումները իրականացնելու ժամանակ պետք է օգտագործել հետևյալ հիմնական սարքավորումները՝ լուսանկարչական ապարատ, հեռադիտակ, էլեկտրական տախոմետր, նիվիլիր, քանոններ՝ ճաքի լայնությունը և խորությունը չափելու համար, լազերային հեռաչափ, ներկի հաստություն չափող սարք, Հեղյուսների ստուգիչ ձգման համար մանոմետրիկ մուրճ.

գ. զննումները և դիտարկումները պետք է իրականացվեն կամրջի կոնստրուկտիվ տարրերի վիճակը ուսումնասիրելու նպատակով՝ համաձայն Աղյուսակ 1-ով ներկայացված պահանջների.

Աղյուսակ 1. Կամրջի կոնստրուկտիվ տարրերի վիճակը ուսումնասիրելու նպատակով իրականացվող զննումները և դիտարկումները

Կոնստրուկտիվ տարրի անվանումը	**Զննման ենթարկվող տարրեր**	**Հատուկ ուշադրության ենթակա թերություններ**
Կամրջային մոտեցումներ	Ճանապարհային ծածկ, և մայթեր	Անհարթություն, ճաքեր և փոսեր, վնասվածքներ, նստվածքներ, թափվածքներ, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
	Կողնակներ	Անհարթություն և փոսեր, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
	Թեքլանջ	Հարթեցում, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
	Պարսպող համակարգ (արգելափակոցներ)	Վնասվածքներ, բացակայություն
	Ջրահեռացման համակարգ	Վնասվածքներ, թափվածքներ, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
Կամրջի կցորդման հանգույց	Հենապատեր, կարգավորիչ պատեր և ջրահեռացման վաքեր	Քայքայում, վնասվածքներ
	կամրջի կցորդման հանգույցին բացվածք	Նեղացում, հենարանների ողողում, ողողատների առկայություն
Երթևեկելի մաս	Ճանապարհային ծածկ	Անհարթություն, ճաքեր և փոսեր, վնասվածքներ,

		նստվածքներ, թափվածքներ, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
	Կամրջի կցորդման հանգույց	Նստվածքներ, ճաքեր և փոսեր
	Արգելապատնեշներ (մետաղական և ե/բետոնե)	Վնասվածքներ, բացակայություն
	Մայթեր	Ճաքեր, ծածկույթի վնասվածքներ այլ վնասվածքներ
	Ջրահեռացման համակարգ	Բացակայություն, վնասվածքներ, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
	Կամրջով անցնող հաղորդակցուղիներ	Ամրացում և վնասվածքներ, որոնք կարող են վնաս պատճառել կամրջին
	Դեֆորմացիոն կարաններ	Վնասվածքներ
Թռիչքային կառուցվածքներ (երկաթբետոնե, բետոնե և քարե)	Հեծաններ	Ճաքեր, խոնավացման գոտիների առկայություն, դեֆորմացիաներ, քայքայում, այլ վնասվածքներ
Թռիչքային կառուցվածքներ (պողպատե, պողպատերկաթբետոնե)	Հեծաններ	Դեֆորմացիաներ, ճաքեր, ներկի վնասվածքներ, կոռոզիա և այլ վնասվածքներ
	Հեղյուսային ու գամային միացումներ, եռակցման կարաններ	Ընդհանուր վիճակ, կոռոզիա և այլ վնասվածքներ
Հենարաններ	Հենարան	Ընդհանուր վիճակ, ճաքեր, քայքայում,

		թեքվածք և այլ վնասվածքներ
	Հիմք (երևացող մաս)	Ընդհանուր վիճակ, ճաքեր, քայքայում, թեքվածք, ողողում և այլ վնասվածքներ
Հենարանային մասեր	Հենարանային մասեր	Աղտոտվածություն, հենարանային մասերի թեքության անկյուն, կոռոզիա, ռետինե մասերի վնասվածքներ, ֆերմատակ պատվանդամների բետոնի քայքայում

դ. կապալառուի կամուրջների պահպանման պատասխանատուն պարտավոր է զննումները և դիտարկումները կատարելու օրը գրառումներ կատարել Մատյանում՝ նշելով զննումների և դիտարկումների արդյունքները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ զննման արդյունքում հայտնաբերված վնասվածքները կամ թերությունները վերացնելու ուղղությամբ,երթևեկության անվտանգությանը վտանգ սպառնալու կամ արտակարգ իրավիճակների, վթարի դեպքում կամուրջների պահպանման պատասխանատուն հնարավոր սեղմ ժամկետում պետք է տեղեկացնի պատվիրատուին ՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

<u>2) Ստուգման ապահովում.</u> Ստուգումն իրականացնում է կապալառուի կամրջի պահպանման պատասխանատուն՝ առնվազն շաբաթական մեկ անգամ: Արդյունքները և հանձնարարականները (ներառյալ կատարման ժամկետները, որոնք պետք է համապատասխանեն սույն կարգի Աղյուսակ 3-ում նշված թերությունների վերացման ժամկետներին) գրանցվում են Մատյանում.

<u>3) Խնամքի և ընթացիկ նորոգման ապահովում.</u>

ա. որպես խնամքի և ընթացիկ նորոգման աշխատանքներ, կապալառուն պարտավոր է իրականացնել կամրջի մաքրման, աղբի և ձյան (սառույցի) հեռացման, կամրջային շինությունների և կահավորանքի աշխատանքային վիճակում ապահովելու, երթևեկամասի և մայթերի շահագործման համար անհրաժեշտ վիճակում պահելու համար համապատասխան աշխատանքներ, կամրջի կոնստրուկտիվ տարրերի վրա առաջացած թերությունների, վնասվածքների ու անսարքությունների վերացման աշխատանքներ:.

բ. կամրջի կոնստրուկտիվ տարրերի (կամրջային մոտեցումներ, ենթակամրջային գոտի, կամրջային պաստառ, թռիչքային կառուցվածքներ (երկաթբետոնյա, բետոնյա և քարե հենարաններ)), կառույցների, սարքավորումների, համակարգերի խնամքի և

ընթացիկ նորոգման ապահովման նպատակով կապալառուն պարտավոր է իրականացնել Աղյուսակ 2-ով սահմանված աշխատանքները:

Աղյուսակ 2. Կամրջի կոնստրուկտիվ տարրերի պահպանման համար իրականացվող աշխատանքներ

N	Կոնստրուկտիվ տարրի անվանումը	Պահպանման համար պահանջվող հիմնական աշխատանքներ
1.	Կամրջային մոտեցումներ	1) Կողնակների հարթեցում 2) Ջրահեռացման վաքերի մաքրում աղբից, թափվածքներից, ավելորդ առարկաներից և ջրահեռացման ապահովում: Վնասվածքների վերանորոգում: 3) Հողային պաստառից ջրահեռացման ապահովում 4) Ճանապարհային նշանների պահանջվող քանակի ապահովում, մաքրում, վերանորոգում, անհրաժեշտության դեպքում՝ նորերի տեղադրում 5) Ճանապարհային ծածկի մաքրում աղբից, ձյունից (սառույցից), թափվածքներից, ավելորդ առարկաներից 6) Ճանապարհային ծածկի և մայթերի վրա առաջացած ճաքերի լցնում 7) Ճանապարհային ծածկի և մայթերի վրա առաջացած փոսերի վերանորոգում 8) Պարսպող համակարգի (արգելափակոցների) և բազրիքների վերանորոգում, ուղղում, լրացում և ներկում (ներկումը պետք է կատարվի տարին առնվազն երկու անգամ՝ գարնանը և աշնանը 9) Նստվածքների վերանորոգում
2.	Կամրջի կցորդման հանգույց	1. Կցորդման հանգույցի կոնի շեպերի մաքրում աղբից, բետոնե սալիկներով ամրակցված շեպերի մաքրում բուսականությունից, բետոնե սալիկներով ամրակցված շեպերի բետոնե սալիկների կամ միաձույլ բետոնե վերին շերտի նորոգում, ավելորդ առարկաներից մաքրում 2. Կցորդման հատվածում գտնվող հենապատերի և կարգավորիչ պատերի մաքրում ցեխից, բուսականությունից և ավելորդ առարկաներից 3. Կցորդման հանգույցի կոնի շեպերի հարթեցում, 4. Մոտեցումների վրա, կցորդման հատվածում գտնվող հենապատերի և կարգավորիչ պատերի վրա առաջացած վնասվածքների (որոնք հնարավոր է վերականգնել առանց հիմնական վերակառուցում իրականացնելու) վերանորոգում

3.	Երթևեկելի մաս	1) Կամրջային պաստառի մաքրում աղբից, ձյունից (սառույցից), բուսականությունից և ավելորդ առարկաներից 2)Երթևեկելի մասի և մայթերի ծածկույթի վրա առաջացած ճաքերի և փոսերի վերանորոգում: Նշագծման իրականացում (գործող նորմերի և պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածներին համապատասխան) 3) Մերկասառույցի առաջացման դեպքում՝ ճանապարհային ծածկի և մայթերի մշակում հակամերկասառուցային նյութերով 4) Արգելապատնեշների վերանորոգում, ուղղում, լրացում և ներկում (ներկումը պետք է կատարվի տարին առնվազն երկու անգամ՝ գարնանը և աշնանը) 5) Բազրիքների վերանորոգում, ուղղում, լրացում և ներկում (ներկումը պետք է կատարվի տարին առնվազն երկու անգամ՝ գարնանը և աշնանը) 6) Բաց տիպի դեֆորմացիոն կարանների բացվածքների մաքրում ցեխից և աղբից 7) Ճանապարհային ծածկի վերանորոգում դեֆորմացիոն կարանների գոտում 8) Դեֆորմացիոն կարանների մշակում բիտումային մածիկով, կոմպենսատորների վերանորոգում և լրացում, ջրամեկուսիչ շերտի վերականգնում, բաց տիպի կարանների միացումների, զսպանակների ձգում 9) Պարապետների, քիվերի, եզրաքարերի և անվահրիչների վերանորոգում, լրացում
4.	Թռիչքային կառուցվածքներ (երկաթբետոնե, բետոնե և քարե)	1) Թռիչքային կառուցվածքների մաքրում ցեխից և աղբից 2) Ճաքերի, ջարդվածքատեղերի վերանորոգում 3) Բետոնի պաշտպանիչ շերտի վերականգնում քայքայվող հատվածներում, մերկացած ամրանների մշակում հատուկ հակակոռոզիոն նյութերով հետագա կոռոզիայից պահպանման համար և փակում տիսկոտրոպ խառնուրդներով
5.	Թռիչքային կառուցվածքներ (պողպատե, պողպատերկաթբետոնե)	1) Թռիչքային կառուցվածքների մաքրում ցեխից, ճարպաղբից և աղբից: Կոռոզիայի ենթարկված և վնասված ներկով հատվածների մշակում և ներկում 2) Դեֆորմացիոն կարանների մշակում բիտումային մածիկով, կոմպենսատորների վերանորոգում և լրացում, ջրամեկուսիչ շերտի վերականգնում, բաց տիպի կարանների միացումների, զսպանակների ձգում 3) Թուլացված հեղյուսների ձգում, վնասված գամերի փոխարինում բարձրամուր հեղյուսներով, եռակցման կարանների վերանորոգում

6.	Հենարաններ	1) Ճաքերի, ջարդվածքատեղերի վերանորոգում 2) Հենարանների մաքրում բուսականությունից 3) Վնասված մակերեսի վերականգնում, անհրաժեշտության դեպքում ջրամեկուսացում
7.	Հենարանային մասեր	1) Հենարանային մասերի մաքրում ցեխից 2) Հենարանային մասերի յուղում և ներկում 3) Հեղյուսների պնդացում

13. Կապալառուն պարտավոր է՝

1) կամրջի հարակից հատվածում ոչ ավել, քան 2 կմ հեռավորության վրա տեղակայել Աղյուսակ 4-ի 8-րդ կետում նշված մեքենասարքավորումը՝ մշտապես ամբողջ տարվա ընթացքում, իսկ 9-րդ կետում նշված մեքենասարքավորումը՝ ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակաշրջանում.

2) կամրջի առնվազն երկու հատվածներում կահավորել տեսանկարահանող սարքերով, որոնք գործում են HLS կամ WebRTC պրոտոկոլներով և ապահովում են կայուն, անընդհատ առցանց հեռարձակում Ճանապարհային ցանցի կառավարման համակարգում:

ԳԼՈՒԽ 3.

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ՝ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Կամրջի պահպանման աշխատանքների ընդունումն իրականացվում է կապալի պայմանագրերով սահմանված կարգով և ժամկետում՝ հիմք ընդունելով պատասխանատուի կողմից սույն կարգի պահանջներին համապատասխան կատարված հսկողության և դրա արդյունքում կազմված կամրջի պահպանման աշխատանքների ամսական ամփոփագիրը (Ձև N 1):

15. Կամրջի պահպանման աշխատանքների նկատմամբ շուրջօրյա հսկողություն ապահովելու նպատակով պատասխանատուն և կապալառու կազմակերպությունները կամրջի պահպանման պայմանագրերի գործողության ողջ ընթացքում կիրառում են «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգ» բջջային հավելվածը, որի օգտագործման պահանջները և պայմանները սահմանվում են կամրջի պահպանման պայմանագրով:

16. Կամրջի պահպանման աշխատանքների ընդունումն իրականացվում է յուրաքանչյուր ամիս կապալի պայմանագրերով սահմանված կարգով և ժամկետում՝ հիմք ընդունելով պատասխանատուի կողմից սույն կարգի պահանջներին համապատասխան կատարված հսկողության և դրա արդյունքում կազմված պահպանման ամսական ամփոփագիրը (Ձև 1):

17. Կամրջի պահպանման աշխատանքների նկատմամբ հսկողությունն իրականացվում է և աշխատանքներն ընդունվում են հետևյալ կերպ՝

1) Պահպանման դիտարկում.

ա. կամրջի պահպանման դիտարկումներն իրականացվում են յուրաքանչյուր ամիս՝ առնվազն երկու անգամ: Դիտարկման ժամանակ ստուգվում է կամրջի պահպանման համապատասխանությունը սույն կարգով սահմանված կամուրջների պահպանման հիմնական տեխնիկական պահանջներին: Դիտարկման ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում պատասխանատուի կողմից «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգ» բջջային հավելվածով տեղորոշվում է թերության տեղամասը և բնույթը, որն ուղարկվում է կապալառու կազմակերպության էլեկտրոնային փոստին՝ միաժամանակ թերությունն արտացոլելով «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգ» բջջային հավելվածում.

բ. թերության մասին էլեկտրոնային փոստը ստանալու օրվանից ոչ ուշ, քան սույն կարգի Աղյուսակ 3-ում նշված թերությունների վերացման համար սահմանված ժամկետում, կապալառու կազմակերպությունը պարտավոր է վերացնել թերությունը և այդ մասին՝ թերության վերացման օրը, ծանուցում ուղարկել պատասխանատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ կցելով թերությունների վերացման փաստը հավաստող լուսանկարներ (մինչև 10 հատ):

2) Կամրջի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունում.

ա.կամրջի պահպանման աշխատանքների դիտարկման արդյունքների հիման վրա պատասխանատուի կողմից կատարվում է կամրջի պահպանման աշխատանքների գնահատում՝ արդյունքները ձևակերպելով կամրջի պահպանման ամսական ամփոփագրում (Ձև 1).

բ. կամրջի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտը ընդունվում է կապալի պայմանագրով սահմանված աշխատանքների ընդունման համար սահմանված կարգով և ժամկետում:

18. Կամրջի պահպանման աշխատանքները ընդունվում և վճարվում են ամբողջությամբ, եթե ապահովված են սույն կարգով և կապալի պայմանագրով սահմանված պահանջները:

19. Կամրջի պահպանման աշխատանքները ընդունվում և վճարվում են մասնակիորեն, եթե պատասխանատուն կատարել է նվազեցումներ սույն կարգի Աղյուսակ 3-ում բերված տոկոսաչափերով կամ, եթե սույն կարգի այլ պահանջների կամ պայմանագրային այլ պարտավորությունների խախտման հիմքով կիրառվել է կապալի պայմանագրով սահմանված տույժ, տուգանք: :

Աղյուսակ 3. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման պահանջների ապահովման արժեքների տոկոսային հարաբերակցությունը

N	Կամրջի կոնստրուկտիվ տարրերի թերություններ	Թերությունը հայտնաբերելուց հետո դրանց վերացման առավելագույն ժամկետները	Նվազեցումներ կամրջի պահպանման արժեքից (%)
1.	**Կամրջային մոտեցումներ և կամրջային պաստառ, այդ թվում՝**		**36**
1)	Երթևեկամասի, կողնակների, մայթերի վրա աղբի և ավելորդ առարկաների, ձյան, սառույցի (ձմեռվա սեզոնին) առկայություն	5 ժամ	5
2)	Երթևեկամասի վրա 3 մմ-ից ավելի լայնությամբ ճաքերի առկայություն, մայթերի վրա 3 մմ-ից ավելի լայնությամբ ճաքերի առկայություն	2 օր	3
3)	Երթևեկամասի վրա 1000 քառ. մ ծածկի մակերեսի վրա 5 քառ. մ ավելի փոսերի առկայություն, նստվածքների առկայություն, մայթերի վրա փոսերի առկայություն	5 օր	3
4)	Կողնակները հարթեցված չեն	1 օր	3
5)	Պարսպող համակարգը (արգելափակոցները), ճանապարհային նշանները բացակայում են կամ ոչ պահանջվող քանակով են տեղադրված կամ վնասված են կամ վերանորոգված չեն, ճանապարհային նշագծումը բացակայում է կամ վնասված է կամ վերանորոգված չէ	2 օր	2
6)	Կամրջային պաստառի, դեֆորմացիոն կարանների, մայթերի վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների առկայություն): Ձմեռվա ժամանակահատվածում նաև ձյան կամ մերկասառույցի առկայություն	5 ժամ Ձմեռ ժամանկահատվա-ծում՝ 1 ժամ	5
9)	Բազրիքները, պարապետները, եզրաքարերը բացակայում են կամ վնասված են կամ վերանորոգված չեն: Բազրիքները և պարապետները ներկված չեն	3 օր	4

10)	Դեֆորմացիոն կարանների վնասվածքների առկայություն	3 օր	5
2.	**Կամրջի կցորդման հանգույց, այդ թվում՝**		**13**
1)	Կամրջի կցորդման հանգույցի թեք լանջերի և կցորդման հատվածում գտնվող հենապատերի և կարգավորիչ պատերի վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների առկայություն	5 ժամ	5
2)	Կամրջի կցորդման հատվածում թեք լանջերը հարթեցված չեն	1 օր	3
3)	Կամրջի կցորդման հատվածում գտնվող հենապատերի և կարգավորիչ պատերի վրա առաջացած վնասվածքները (որոնք հնարավոր է վերականգնել առանց հիմնական վերակառուցում իրականացնելու) վերանորոգված չեն	3 օր	5
3.	**Թռիչքային կառուցվածքներ**		
1)	**Թռիչքային կառուցվածքներ (երկաթբետոնե, բետոնե և քարե), այդ թվում՝**		**19**
ա.	Թռիչքային կառուցվածքների վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների, սառույցի (ձմեռվա սեզոնին) առկայություն	5 ժամ	5
բ.	Ճաքերի, ջարդվածքատեղերի առկայություն	3 օր	7
գ.	Չվերականգնված բետոնի պահպանիչ շերտի և չմշակված բացված ամրանների առկայություն	5 օր	7
2)	**Թռիչքային կառուցվածքներ (պողպատե, պողպատերկաթբետոնե), այդ թվում՝**		**19**
ա.	Թռիչքային կառուցվածքների վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների առկայություն	5 ժամ	5
բ.	Մետաղյա կոնստրուկցիաները մաքրված չեն, ներկի վնասվածքների առկայություն	5 օր	7

գ.	Վնասված հեղյուսային և գամային կարանների, եռակցման կարանների առկայություն	5 օր	7
3)	**Հենարաններ, այդ թվում՝**		**19**
ա.	Հենարանների վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների առկայություն	5 ժամ	5
բ.	Հենարանների վրա չվերանորոգված ճաքերի և ջարդվածքատեղերի առկայություն	5 օր	7
գ.	Հենարանների վրա չջրամեկուսացված վնասված մակերեսի առկայություն	3 օր	7
4.	**Հենարանային մասեր, այդ թվում՝**		**13**
1)	Հենարանային մասերի վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների առկայություն	5 ժամ	5
2)	Հենարանային մասերը յուղված և ներկված չեն	3 օր	4
3)	Հենարանային մասերի թուլացված հեղյուսների առկայություն	3 օր	4

Ձև 1

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ՝ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ճանապարհի անվանումը՝_____

Ճանապարհի վրա գտնվող առանձին պահպանվող կամրջի տեղադրությունը (կմ)՝ _____

_____

Տարին _____ ամիսը _____

NN	Կամրջի պահպան-ման արժեքը	Նվազեցման տոկոսներն ըստ կոնստրուկտիվ տարրերի						Նվազեց-ման ընդհանուր տոկոսը	Նվազեց-վող գումարը
		Կամրջային մոտեցում-ներ	Ենթա-կամրջա-յին գոտի	Կամրջային պաստառ	Թռիչքային կառուց-վածքներ	Հենարան-ներ	Հենարա-նային մասեր		

Կատարողականի գումարը նվազեցումից հետո՝ _____ դրամ:

Ճանապարհների պահպանման պատասխանատուի լիազոր ներկայացուցիչ

_____

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

Կապալառուի լիազոր ներկայացուցիչ

_____

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

____ _____ 20 թ.

ԳԼՈՒԽ 4.

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ՝ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

20. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման մրցույթների առարկան է հանդիսանում կամուրջների՝ պահանջվող չափանիշներով պահպանումը ապահովող որակյալ կապալառու կազմակերպությունների ձեռքբերումը:

21. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման աշխատանքների ձեռքբերման մրցույթներն անցկացվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

22. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման աշխատանքներ իրականացնող կապալառուների ձեռքբերման մրցույթների մասնակիցներին ներկայացվող նվազագույն տեխնիկական պահանջներն են՝

1) Մասնակիցը պետք է ունենա նվազագույնը հինգ տարվա աշխատանքային փորձ՝ կամուրջների շինարարության կամ երեք տարվա աշխատանքային փորձ՝ կամուրջների պահպանման կամ ավտոմոբիլային ճանապարհների շինարարության ոլորտներում.

2) Մասնակիցը նվազագույնը պետք է ունենա 1 մասնագետ՝ տրանսպորտի կամ շինարարության բնագավառի բարձրագույն մասնագիտական կրթությամբ.

3) Մասնակիցը նվազագույնը պետք է ունենա Աղյուսակ 4-ում նշված մեքենասարքավորումները՝

Աղյուսակ 4

Հ/h	**Անվանումը**	**Պահանջվող քանակը**	**Սեփականության ձևը**
1.	*Ուղևորաբեռնատար ավտոմեքենա*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական կամ վարձակալած
2.	*Բեռնիչ*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական կամ վարձակալած
3.	*Ավտոմոբիլային ամբարձիչ*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական կամ վարձակալած
4.	*Կոմպրեսոր կամ ճանապարհային ֆրեզ*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
5.	*Գլդոն (> 5 տ)*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական կամ վարձակալած
6.	*Եռակցման համակարգ*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
7.	*Ինքնաթափ բեռնատար մեքենա*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական կամ վարձակալած
8.	*Գլանակաձև՝ հորիզոնական խոզանակով, մաքրող, լվացող և հավաքող սարքավորում*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
9.	*Կոմբինացված ճանապարհային մեքենա՝ կահավորված ձյունամաքրիչ սարքավորմամբ, վերազինված ռետինե պաշտպանիչ շեղբով և փոշեցիրով, աղավազային խառնուրդի շաղացիր սարքավորմամբ*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
10.	*Կռունկ*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական կամ վարձակալած
11.	*Լուսանկարչական ապարատ*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
12.	*Հեռադիտակ*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
13.	*Քանոններ՝ ճաքի լայնությունը և խորությունը չափելու համար*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական

14.	*Էլեկտրական տախոմետր*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
15.	*Լազեռային հեռաչափ*	Նվազագույնը՝ 1 լրակազմ	Սեփական
16.	*Նիվիլիր*	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
17.	*Ներկի հաստություն չափող սարք*	Նվազագույնը՝ 1 լրակազմ	Սեփական
18.	*Հեղույսների ստուգիչ ձգման համար մանոմետրիկ մուրճ*	Նվազագույնը՝ 1 լրակազմ	Սեփական կամ վարձակալած

4) Կախված կամրջի երկարությունից, պահպանման աշխատանքների ծավալից և բարդությունից Աղյուսակ 4-ում նշված մեքենասարքավորումների նվազագույն քանակից բացի մրցույթային փաստաթղթերով կարող է սահմանվել լրացուցիչ քանակի մեքենասարքավորումներ ունենալու պահանջ:

5) Բացի սույն կարգի Աղյուսակ 4-ում նշված սեփական մեքենասարքավորումներից՝ թույլատրվում է վարձակալել մնացած պահանջվող մեքենասարքավորումների քանակի քսան տոկոսը: Կապալառուի կողմից վարձակալությամբ ձեռք բերվող մեքենասարքավորումները, վարձակալության ժամանակահատվածում, չեն կարող օգտագործվելու վարձատուի կողմից կամ տրամադրվել այլ կազմակերպությանը կամ անհատին:

23. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման մրցույթների համար այլ որակավորման չափանիշների սահմանումը, ինչպես նաև դրանց գնահատումը կարգավորվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

24. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման աշխատանքների ձեռքբերման մրցույթներին մասնակցելու համար հայտատու կազմակերպությունները պետք է ներկայացնեն աշխատանքների ինքնարժեքի հաշվարկ՝ ըստ ստորև բերված Ձև 2 -ի:

Ձև 2

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման աշխատանքների ինքնարժեքի հաշվարկման ձև

N	**Կամրջի անվանում**	**Պահպանման աշխատանքների արժեքը (դրամ) պայմանագրի ամբողջ ժամկետի համար**

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ